Ուղերձ՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ

Սիրելի՛ ուսուցիչներ,

Շնորհավորում ենք ձեզ՝ մասնագիտական տոնի առթիվ: Մեր ժողովուրդն այս տոնն ավանդաբար նշում է պատկառանքի ու երախտագիտության մեծ զգացումով:

Դարավոր պատմության ընթացքում ուսուցիչը միշտ էլ ամենապատվավոր ու հարգալից տեղն է զբաղեցրել հասարակական կյանքում: Ձեր գործունեությունը վճռորոշ դեր եւ ռազմավարական նշանակություն ունի մարդու, ժողովրդի, պետության կյանքում: Մանկավարժ լինելն ինքնին յուրահատուկ վերաբերմունք ու ձիրք է պահանջում, առանձնահատուկ հոգեբանություն եւ նվիրում, բարոյական պատասխանատվություն ժողովրդի ապագայի եւ երկրի վաղվա օրվա հանդեպ:

Այսօր մենք երախտագիտություն ենք հայտնում ձեզ այն կարեւոր ու պատասխանատու աշխատանքի համար, որ իրականացնում եք դուք՝ կրթելով ու դաստիարակելով սերունդներին, սերմանելով նրանց մեջ սեր ու հարգանք գիտելիքի հանդեպ, օգնելով առաջին քայլերն անել կյանքում եւ դառնալ լավ մարդ ու քաղաքացի: Դրանով իսկ դուք կերտում եք մեր պետության եւ ժողովրդի ապագան:

Սիրելի՛ ուսուցիչներ, մեկ անգամ եւս շնորհավորում ենք բոլորիդ Ուսուցչի օրվա առթիվ: Մաղթում ենք խաղաղություն, քաջառողջություն, երջանկություն ու ամենայն բարիք:

ՀՀ Արագածոտնի մարզպետարան